ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության
ապահովման վարչության պետ
Ս.Հովհաննիսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ
08.06.2026-03.08.2026թթ.

2026 թվականի հունիսի 8-ից 2026 թ. օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածում
ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փորձագետ՝
Մերի Իշխանի Խաչատրյանիս կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1) Մասնակցել եմ պետական և այլ մարմիններից ՀՀ ՆԳ նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին հասցեագրված ոչ գաղտնի փաստաթղթերի հաշվառման և ըստ մակագրության համապատասխան հասցեատերերին առաքման աշխատանքներին,
2) Մասնակցել եմ ՀՀ ՆԳ նախարարությանն ենթակա պետական մարմինների ղեկավարների կողմից ստորագրված ոչ գաղտնի իրավական ակտերի հաշվառման, պահպանման, բազմացման և առաքման աշխատանքներին,
3) Հավաքագրել եմ գրություններով պահանջվող արխիվային փաստաթղթերի պատճեններն ու պատասխան գրությունները,
4) Մասնակցել եմ գործավարության կարգի պահանջներին համապատասխան Նախարարությունից առաքվող և Նախարարություն մուտքագրվող փաստաթղթերի, նամակների և դիմումների փաստաթղթաշրջանառությանը
5) Մասնակցել եմ արխիվային փաստաթղթերի սահմանված կարգով պահպանման, օգտագործման, տրամադրման և փաստաթղթերի արխիվ հանձնման ու դրանց արխիվացման աշխատանքներին:

ՀՀ ՆԳՆ ՓՇԱՎ փորձագետ **Մ. Խաչատրյան**
« 03 » օգոստոսի 2026թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում

եմ «բավարար» **:**

ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության
ապահովման վարչության ՓՇԱ բաժնի պետ **Ռ. Շահվերդյան**
« 03 » օգոստոսի 2026թ.